Խլաթի պատրիկը Իյադ ի. Ղանմի թղթով.[1] այս Իյադ ի. Ղանմ ապահովել էր Նորա անձն, գոյքն եւ երկիրն եւ խաղաղութիւն կապել Նորա հետ՝ իրան հարկ տալու պայմանով, որ եւ հաստատեց Հաբիբ։ Նա իւր բանակն դրած էր Հարակի[2] եւ Վարագայ դաշտի մէջ, երբ Նորա մօտ եկաւ Խլաթի տէրը ինչ ինչ ընծաներով, բայց Հաբիբ չընդունեց Նորանից եւ բանակեցաւ Խլաթում։ Այստեղից նա գնաց Սիփան (?),[3] որտեղ Նորան պատահեցաւ Մոկսի տէրը (այս դաւառը կը պատկանէր Վասպուրականին). Հաբիբ խաղաղութիւն կապեց Նորա հետ Նորա հողերը գրաւելու պայմանով, մարդ դրեց Նորա հետ եւ գրեց խաղաղութեան եւ պաշտպանութեան թուղթ։ Ապա մարդ ուղարկեց Արճէշ եւ Բաջունայիս, նուաճեց այս քաղաքները եւ ժողովրդից գլխահարկ առաւ, իսկ մեծամեծներին, որոնք Նորա մօտ եկան, խաղաղութիւն պարգեւեց հարկ տալու պայմանով։ Ինչ կը վերաբերի Տիրիխի[4] ծովակին, նա Նորան

---

1 Նախ քան Հայաստանի վերայ արշաւելն՝ ըստ Բէլազորի՝ Արաբացիք Իյադ ի. Ղանմի առաջնորդութեամբ 19 թ. մտան Միջագետք եւ նուաճեցին Ամիդ, Նփրկերտ, Մծբին, Մարդին, Աղձնիք, Բիթլիս եւ Խլաթ։ Ուրեմն դեռ 640 թ. Աղձնիք եւ Ցուրուբերանի մի մասը կը գտանուէին Արաբացոց իշխանութեան տակ։ Այս հետաքրքրական հատուածը, որ կրում է "Միջագետքի նուաճումն" վերնագիրը, առաջ կը բերենք իւր տեղում։

2 Թւի թէ Հարք եւ Վարաժնունիք գաւառների մասին է խօսքը։ Հաբիբ այսպիսով Կարինից շրջունակ դէպի հարաւ կ'ուղեւորուէր. Մարդաղից գալով Հարք եւ ապա Խլաթ, նա Արճէշի վերայով ուղղակի դիմած է Դուին։

3 Սիփան կէտադրութեան բացակայութիւնը կը վկայէ, որ անունս աղաւաղած է. թերեւս կարդալու է Սէփան (լեռան)։

4 Բնագրի طريخ ուղղելու է طَرِيخ. այսպէս կը կոչէր Վանայ ծովը, որ դեռ հնումն հռչակած էր իւր թարիխի (Τάριχα) աղէձկներով։